

**ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆԸ
ԱՌԱԲԻՆՈՒԹԻՒՆ ԷՎ՝ՕԳՆԵՍ
ԱՂՔԱՏԻՆ**

Մի տրամիր, որ հարստութիւնդ կը պակսի, որովհետեւ նոյքան ալ մեղքերդ կը պակսին, երբ դրամը կը հեռացնես քեզմէ, նաեւ մեղքերդ կը հեռացնես եւ ինչ պիտի գործերուդ աղտոտութիւններէն կը սրբուիս, ինչպէս կ'ըսէ Տէրը.- «Ինչ, որ կրնաք, տուէք իբրեւ ողորմութիւն եւ ահա ամէն ինչ մաքուր պիտի ըլլայ ձեզի համար» (Ղուկ. 11:41): Ողորմածին մարմինը ողորմութեամբ կը սրբուի, հոգին եւս կը սրբուի, ինչքերդ կ'օրհնուին, յաջող աշխատանք կ'ունենայ, ունեցածներդ կը բազմապատկուին, որովհետեւ երբ աղքատներուն եւ կարիքաւորներուն ողորմութիւն կ'ընես, գայն Աստուծոյ փոխ կու տաս եւ Աստուած ասոր փոխարէն կու տայ ո՛չ միայն այն, որ ըսաւ վերը, այլեւ՝ ողորմածին կու տայ արքայութիւնը, կը փրկէ գայն թշնամիին որոգայթներէն եւ կ'ազատէ դժոխքէն: Թէեւ մեծ սրբութիւն է կուսութիւնը, սակայն աւելի պատուական է ողորմածութիւնը: Թէեւ մեծ է պահեցողութիւնը, մեծ են բազմաթիւ առաքիներութիւններ, սակայն ողորմութիւնը աւելի մեծ է եւ կարեւոր ու Աստուծոյ ընդունելի: Ողորմած մարդը մեծ է եւ պատուական: Ան, որ ողորմութիւն չ'ընէր, Ս. Գիրքը այդպիսին մարդ չ'անուաներ: Արդարեւ, նման մարդիկ ճրագ են՝ առանց լոյսի, աչք են՝ առանց տեսողութեան, աղբիւր են՝ առանց ջուրի եւ գօսացած ծառեր, որոնք միայն անուն ունին՝ բայց ոչ օգտակարութիւն:

ՀԱՆՎՈՐՆԵՔ



Ահաւասիկ ասանդական արարողութիւն մը, որ ծիսական Մաշտոցին մէջ արձանագրուած է, որպէս հալաւօրհներ:

Մալխասեան բառարանը հալաւօրհները որպէս իմաստ կամ բացատրութիւն գրած է հետեւեալը.- Կը նշանակէ սպիտակեղէն կամ զգեստ կարելու յարմար կտոր: Իսկ հալաւօրհներին համաձայն Մալխասեանին եւ միայնգամայն ծիսարան Մաշտոցին կը նշանակէ պսակադրութենէն առաջ հարսին ու փեսային հարսանեկան հագուստներուն օրհնութիւնը:

Այս էր ասանդութիւնը: Քահանայ հայրը անպայման պսակադրութեան առաւօտուն, պէտք էր այցելէր եւ օրհներ փեսային եւ հարսին հագուստները եւ անոնք յետ օրհնութեան կրնային զգեստաւորուիլ եւ եկեղեցի գալ պսակուելու համար:



ԶՈՒ ԽՈՍԵՂ ԽՆ ՈՅԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՆ ԸՄԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս. 119-105)

ԺԵ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 9 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2022 ԹԻՒ 41

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ
Ես. 19.1-11: Գղ. 2.1-10: Մր. 12.35-44

ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ 12.35-44

Յիսուս տաճարին մէջ ուսուցանելու ընթացքին հարցուց ժողովուրդին. «Օրէնքի ուսուցիչները ինչպէ՞ս կրնան ըսել, թէ Քրիստոս՝ խոստացուած Փրկիչը, Դաւիթի սերունդէն է», երբ Դաւիթ ի՛նք Սուրբ Հոգիով ներշնչուած կ'ըսէ.

«Տէրը ըսաւ իմ Տիրոջս. աջ կողմս նստէ՛, մինչեւ թշնամիներդ ոտքերուդ տակ դնեմ՝ որպէս պատուանդան»:

Եթէ Դաւիթ գայն Տէր կը կոչէ, ինչպէ՞ս ուրեմն Քրիստոս անոր որդին է:

Ժողովուրդը հաճոյքով մտիկ կ'ընէր Յիսուսի, որ իր ուսուցումները շարունակելով կ'ըսէր. «Զգոյշ եղէ՛ք օրէնքի ուսուցիչներէն, որոնք կը սիրեն փառաւոր զգեստներով շրջիլ, հրապարակներու վրայ մարդոցմէ յարգալիք բարեւներ ընդունիլ, ժողովարաններու մէջ առաջին աթոռները գրաւել եւ ընթրիքներու ընթացքին՝ պատուոյ տեղերը: Մէկ կողմէ այրիներուն տունները անոնց ձեռքէն կը յափշտակեն, իսկ միւս կողմէ կեղծաւորութեամբ իրենց աղօթքը կ'երկարեն: Անոր համար աւելի խիստ դատապարտութիւն պիտի ընդունին»:

Յիսուս կեցած էր տաճարի գանձանակին մօտ եւ կը դիտէր ժողովուրդը, որ դրամ կը նետէր գանձանակին մէջ: Շատ մը հարուստներ մեծ գումարներ նետեցին: Աղքատ այրի մըն ալ եկաւ եւ նետեց երկու լումայ, որ հինգ դահեկան կ'ընէ: Յիսուս մօտը կանչեց իր աշակերտները եւ ըսաւ անոնց. «Վստահ գիտցէ՛ք, որ այս թշուառ այրին բոլորէն աւելի դրամ նետած եղաւ գանձանակին մէջ, որովհետեւ միւսները իրենց աւելորդ գումարներէն նետեցին, մինչ ան՝ հակառակ չքաւոր ըլլալուն, ինչ որ ունէր նետեց, իր ամբողջ ապրուստը»:

ԱՌԱԿ 15

Բարկացոտ մարդը կռիւ կը ստեղծէ, մինչ համբերատարը գալիք խռովութիւնը կը մեղմացնէ: Համբերատար մարդը վէճերը կը մարէ, մինչ ամբարիշտը աւելի կը հրահրէ:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՎԱՐՔ Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅԻ



Ս. Մեսրոպ Մաշտոց ծնած է Տարսուս գաւառի Հացեկաց գիւղը: Սորված է յունարէն, ասորերէն եւ պարսկերէն լեզուները: Հայոց Խոսրով Դ. թագաւորի պալատին մէջ վարած է գինուորական քարտուղարի պաշտօն եւ նանչուած է որպէս գիտնական անձնաւորութիւն:

Աստուծոյ, ազգին ու եկեղեցիին հանդէպ իր սէրը այնքան վառ եղած է, որ թագաւորական պալատը ձգելով դարձած է կուսակրօն եկեղեցական եւ նուիրուած է Ս. Աւետարանի քարոզչութեան:

Ս. Սահակի նման, ինքն ալ իր շուրջը հաւաքած է երիտասարդ կրօնաւորներ եւ անոնց հետ շրջած է Հայաստանի գանձաւոր կողմերը՝ Քրիստոսի լոյսը տարածելու համար: Իր ջանքերը եղած են արդիւնաւետ: Իր քարոզներուն շնորհիւ, Գողթան գաւառի մէջ ջնջուած են հեթանոսական մեղսալի սովորութիւնները եւ մարդիկ աստուածապաշտութեան հետեւած են:

Իր քարոզներուն ընթացքին, զգացած է հայ լեզուի համար սեփական գիրերու անհրաժեշտութիւնը եւ ձեռնարկած է հայ գիրերու գիւտին:

Ի վերջոյ աստուածային յայտնութեամբ կատարելագործած է իր աշխատանքը եւ ամբողջացուցած՝ հայոց այբուբենը: Ձեռնարկած է Աստուածաշունչի հայերէն թարգմանութեան:

Ս. Մեսրոպ առաջին ուսուցիչն է հայ լեզուին եւ հիմնադիրը՝ հայ գրականութեան: Ինքն է հայերէնը գրաւոր լեզու դարձնող ռահվիրան:

Թարգմանչական աշխատանքի կողմին, գրած է շարականներ, յորդորական թուղթեր եւ աղօթքներ:

Մեսրոպ Մաշտոց եղած է հայ Ծիսարանի առաջին խմբագիրը, որ հետագային ունեցած է իր յաւելումները: Այդ գիրքը իր անունով կոչուած է «Մաշտոց», որ կը գործածուի մինչեւ այսօր:

Ս. Մեսրոպ Մաշտոց, հայ գիրերու գիւտէն ետք, հնարած է նաեւ վրացիներուն եւ աղուաններուն այբուբենը:

ՏՕՆԵՐԸ ԵՐԲ ՍԿԱՆ

Աւանդութիւնը կ'ըսէ, որ առաջին երեք դարերուն, սուրբերու նահատակութեան թուականին, անոնց յիշատակը կը կատարէին: Չորրորդ դարուն, մեր Լուսաւորիչը՝ Գրիգոր տօնեց Հոփսիսիմեանց եւ Գայիանեանց տօները, եւայլն: Հինգերորդ դարուն, Սուրբ Սահակ Պարթեւ Հայրապետին գործակցութեամբ, Սուրբ Մեսրոպ Մաշտոցը գրեց տօնացոյցը մինչեւ իրենց օրերը եւ ինչպէս հին ձեռագիրներու տօնացոյցներէն կ'երեւի, սուրբերուն յիշատակները տնօրինած է ուսիքի եօթնեակներու չորս օրերը: Ապա, եկեղեցւոյ տօնացոյցը հետգիտէ հարստացաւ նահատակներով եւ որբակեացներով, մինչեւ տասնհինգերորդ դար, ինչպէս նաեւ տնօրինուեցաւ՝ Ամենայն Սրբոց՝ հին թէ նոր, յայտնի թէ անյայտ սուրբերու տօնը:

Հ ՈԳԵՒՈՐ ՊԱՏ ԳԱՍ

ԵԿԵՂԵՑԻՆ՝ ՈՐԲԻՆ ՈՒ ԱՂՔԱՏԻՆ ՏՈՒՆԸ ՊԷՏՔ Է ԸԼԱՅ

Ի ծնէ կաղ մարդ մը, որ ամէն օր շալկած կը բերէին եւ տաճարին Գեղեցիկ կոչուած դարպասին քով կը դնէին (Գրծ. 3.2): Որո՞նք էին ի ծնէ կաղ մարդը տաճարին Գեղեցիկ կոչուած դարպասին քով բերողները, եւ չեմ գիտեր, դուն ալ չես գիտեր եւ ոչ ոք գիտէ: Բայց բոլորս ալ մէկ բան գիտենք, որ անոնք գուր ու գորով ունեցող մարդիկ էին, իրենց նմանին տառապանքը տեսնող եւ իրենց նմանին տառապանքէն հասկցող մարդիկ էին եւ գիտէին, որ այդպիսիներուն տեղը տաճարն էր, մեր երկնաւոր Հօր տաճարը:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼ ԻՔ Հ ՈԳԵՒՈՐ ԴԱՍԸ

Այսօր մենք կ'անդրադառնա՞նք, որ կաղին ու կոյրին, աղքատին եւ անտեսուածին, անիրաւուածին ու հարստահարուածին տեղը եկեղեցին է: Եկեղեցին, որ կոչուած է ըլլալու տունը Աստուծոյ, սիրոյ արտացոլացումը Աստուծոյ, իր դռները լայն կը բանա՞յ հիւանդին ու որբին դիմաց: Ո՞ր են մեր մէջ այն մարդիկը, եկեղեցական թէ աշխարհական, որոնք գործնապէս կը դաւանին, որ եկեղեցին տունն է տկարին ու աղքատին:

ԵՅԷ ԿԱՍ ԵՐԲ Կ՛ՈՒՉԵՍ...

ԵՐԲ Կ՛ՈՒՉԵՍ ԳԻՏՆԱԿ, ԹԷ Ի՛ՆՉՔԸՆ ՎԱՂԱՅՈՒԿ Է ԿԵՂԵՔԸ, ԿԱՐԿԱ՛ ՍԱՂՄՈՍ 39

Ես ինձի խորհեցայ.- Ինքզինքիս հսկեմ, որ խօսքով չմեղանչեմ: Բերնիս սանձ դնեմ ամբարիշտ մարդոց ներկայութեան: Ականջներս փորձեցի փակել, ամենեւին լուռ մնացի, բայց՝ անօգուտ: Յաւերս աւելի սաստկացան: Սիրտս մէջս բորբոքեցաւ, միտքս տենդով բռնուեցաւ, ստիպուեցայ խօսելու.- Յոյց տուր, ո՛վ Տէր, իմ վախճանս: Ի՞նչքան պիտի ըլլայ տետողութիւնը կեանքիս: Գիտնամ, թէ ինչքա՛ն վաղանցուկ եմ ես: Գիտեմ, կեանքիս օրերը մատի վրայ կը համրուին, անոր տետողութիւնը ոչինչ մըն է քու աչքիդ եւ արդարեւ լոկ շունչ մըն է մարդու գոյութիւնն ամբողջ: Արդարեւ մարդս շրջուն ստուեր մըն է լոկ: Չուր տեղ կը տազնապի, կը դիզէ, առանց գիտնալու՝ թէ ո՛վ պիտի ժառանգէ գայն: Հետեւաբար, ուրիշ որո՞ւ յոյս դնեմ, Տէ՛ր, դո՛ւն ես յոյսս:

Բոլոր իմ յանցանքներէս փրկէ՛ գիս: Անմիտ մարդոց ծաղրի առարկայ մի՛ դարձներ գիս: Լուռ պիտի մնամ, պիտի չբանամ բերանս, որովհետեւ դո՛ւն ես, որ գիս այս վիճակին մատնեցիր: Հեռացո՛ւր ինձմէ՛ քու տուած այս պատիժդ, որուն սաստկութեան ա՛լ չեմ դիմանար:

ՇԱՐՈՒՆԱԿԵԼ ՍԱՂՄՈՍԵՆ